Երրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1018[2]-11.11.2010,07.12.2010-ՏՀ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<Բնապահպանական վերահսկողության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածով կատարվող փոփոխությունները և լրացումներն անհրաժեշտ է նախատեսել նախագծի 1-ին հոդվածից առաջ՝ պահպանելով «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների հաջորդականությունը, իսկ նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներով կատարվող փոփոխությունները և լրացումները նախատեսել մեկ հոդվածով, քանի որ հիշյալ փոփոխությունները կատարվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միևնույն՝ 22-րդ հոդվածում:

Հոդված 1. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից հանել “ընդերքի” բառը, <օգտագործման,> բառից հետո լրացնել <ընդերքօգտագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության> բառերը, իսկ <բնօգտագործման,> և <ծավալների> բառերից հետո լրացնել <(բացառությամբ ընդերքօգտագործման)> բառերը:

Հոդված 2. <Բնապահպանական վերահսկողության մասին> Հայաստանի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-82-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա), բ), գ) և դ) ենթակետերը ուժը կորցրած ճանաչել, իսկ <զ> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<զ) ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված բնապահպանական միջոցառումների իրականացման համար ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ>:9-րդ կետի ա) և բ) ենթակետերում <վճարներ> բառից հետո լրացնել <բացառությամբ ընդերքօգտագործման վճար հանդիսացող բնօգտագործման վճարների> բառերը:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետից և 2-րդ մասի գ) կետից հանել <օգտակար հանածոների> բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: